# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ՇՀԱՇՁԲ-17-2-15/3 (ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/3) ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար՝ ՀՀ տարածքում արտադրված կամ ՀՀ տարածք ներմուծված <<Ալկոհոլային խմիչք>> և <<Ծխախոտ>> տեսակի ակցիզային դրոշմանիշերի տպագրության աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավարի 10.04.2017թ. N 36/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 21.04.2017թ. ժամը 11-00-ին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Վ.Մանուկյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա.Ենոքյանը, Ս.Ստեփանյանը, Ժ.Կարապետյանը, Լ.Զաքարյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

**Օրակարգ**

**Հայտերի բացման և գնահատման մասին**

**1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները**

-ՊԵԿ-ՇՀԱՇՁԲ-17-2-15/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Վ.Մանուկյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ՇՀԱՇՁԲ-17-2-15/3 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.
«Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ -ն (ք.Երևան, Չարենցի 25)

-ՊԵԿ-ՇՀԱՇՁԲ-17-2-15/3 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին (ARMEPS) համակարգի միջոցով հայտ չեն ներկայացրել համակարգում 21.04.2017թ.-ի դրությամբ գրանցված մնացած մասնակիցները:

**2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին**

-«Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտը էլեկտրոնային (ARMEPS) համակարգի կողմից դիտվել է որպես (պիտանի) հայտ:

**3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ**

-«Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, որոնք կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:

**4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը**

| Չ/Հ | Աշխատանքի անվանումը | Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ | Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ | Նախահաշվային գինը |
|---|---|---|---|---|
| | | Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ | | |
| 1 | <<ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔ>> տեսակի ակցիզային դրոշմանիշի տպագրության աշխատանքներ | 288639000 | 346366800 | 346366800 |
| 2 | <<ԾԽԱԽՈՏ>> տեսակի ակցիզային դրոշմանիշի տպագրության | 887568000 | 1065081600 | 1065081600 |

**5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին**

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**6. Հանձնաժողովը որոշեց՝**

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

-գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. «Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:

2. «Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ-ին ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

4. Սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

5.Ոչ ավտոմատ եղանակով ծանուցել հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին՝ «Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ-ին առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Վ.Մանուկյան

Անդամներ՝ Ա.Ենոքյան

Ս.Ստեփանյան

Ժ.Կարապետյան

Լ.Զաքարյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան